

# Ժողովուրդ

24 հունվարի երեքշաբթի 2023  
տպագրության ԺԲ տարի

9  
(2675)

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄՊԱՄՎԱԾ ԸՈՈՒՆ



Քաղաքական իշխանությունները հանրությանը շեղում են բուն օրակարգից: Բանն այն է, որ երեկ 33 գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը եւս մեկ միջնորդություն է ներկայացրել Ազգային ժողովի նախագահին: Այս անգամ դատախազը միջնորդել է 33 ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հարցին համաձայնություն տալու վերաբերյալ: Հունվարի 20-ին նման միջնորդություն երեք դրվագով ներկայացվել էր նաեւ 33 պաշտպանության նախկին նախարար, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի մասով: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջնորդություններ կլինեն նաեւ նույն խմբակցության պատգամավորներ Իշխան Սաղաթեյանի եւ Գեղամ Մանուկյանի մասով: Իսկ ո՞րն է իշխանությունների նպատակը: Ակնհայտ է, որ քաղաքական իշխանությունը նպատակ ունի շեղել հանրության ուշադրությունը երկրում կատարվող իրադարձությունների հանդեպ: Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 12-ից փակ է Լաչինի միջանցքը, իսկ հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքում տեղի ունեցած ողբերգական միջադեպով դեռ շատ հարցեր մնում են անպատասխան, եւ այսպես, կարծես թե, իշխանությունը շեղում է ուշադրությունը: Ինչպես հայտնի է, բոլոր միջնորդությունները պետք է քննարկվեն հերթական նստաշրջանի առաջին նիստի օրը, այս դեպքում՝ փետրվարի 7-ին: Ինչն այդ նստաշրջանում մի քանի ժամ միայն այս քննարկումն է տեւելու՝ կարելու այլ օրակարգային հարցերը մի կողմ թողած: Նկատենք՝ Արմեն Չարչյանի գործը վերաբերում է հայտնի Հաց բերողին՝ Արթուր Սարգսյանին, եւ, ամենայն հավանականությամբ, այն վաղեմության ժամկետով կարճվելու է: Գեղամ Մանուկյանին իր հայտարարությունների համար կալանավորել չեն կարող, իսկ, ահա, Իշխան Սաղաթեյանին կալանավորելն էլ կդիտվի քաղաքական՝ հաշվի առնելով, որ նա ՀՀԳ ԳԱ ներկայացուցիչ է, եւ լայն արձագանք կունենա քաղաքացիներին: Սեյրան Օհանյանին կալանավորելու ցանկությունն էլ որոշում եղել է, սակայն քաղաքական իշխանությունն այս հարցով էլ որոշել է նրան այս փուլում չկալանավորել, այլ միայն քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն ներկայացնել: Ֆիքսենք՝ նախորդ դեպքերում, երբ դատախազությունը կոնկրետ պատգամավորի մասով միջնորդություն է ներկայացրել ԱԺ, եղել է երկու մասից բաղկացած՝ մեկով միջնորդել են անձեռնմխելիությունից զրկել պատգամավորին՝ ջրգործում որպես մեղադրյալ ներգրավելով, մյուսով ազատությունից զրկելու միջնորդություն է եղել: Այդպես է եղել թե՛ նախկին պատգամավորներ Մանվել Գրիգորյանի, թե՛ Գագիկ Ծառուկյանի մասով, իսկ այս դեպքում միջնորդությունները վերաբերում են միայն անձեռնմխելիությունից զրկելուն, ինչը ենթադրել է տալիս, որ պատգամավորները չեն կալանավորվի: Այս ամենը պարզապես ջրու է՝ հասարակությանը զբաղեցնելու համար:

**1** 5 զինծառայողի կյանք խլած ողբերգական հրդեհից հետո ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանի հրաժարականի մեծ պահանջ բարձրացավ հանրության ամենատարբեր շերտերի մոտ: Թեեւ հասարակության զայրույթը զայելու համար իշխանությունները միջադեպից ժամեր անց, չսպասելով անգամ քննության ավարտին, բարձրաստիճան զինվորականներ աշխատանքից ազատեցին, բայց սա «չի փրկում» Պապիկյանին: Հասարակությունը ողբերգական միջադեպի առաջին պատասխանատու համարում է Պապիկյանին եւ պահանջում նախարարի հրաժարականը: Հասարակության զայրույթը թե՛ ժառանգել է հատկապես այն բանից հետո, երբ Պապիկյանը դեպից միայն 2-3 օր անց գնաց Գեղարքունիք՝ իրավիճակին ծանոթանալու: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԶՊ մի թեւն անհանգստացած է Պապիկյանի հրաժարականի պահանջից ու փորձում են հարցուփորձով հասկանալ՝ ով է կանգնած Պապիկյանի հրաժարականի թիկունքում, այսինքն՝ ում համար է ազատվում ՊՆ նախարարի աթոռը: Նկատենք, որ ԶՊ-ականները ջանք ու եռանդ չեն խնայում իրենց կուսակցին արդարացնելու եւ հանրային զայրույթը պարպելու համար: Միջադեպի հաջորդ օրը՝ առավոտյան, ԶՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, անդրադառնալով Պապիկյանի պահանջին, հայտարարեց, որ այդ հարցը տեղին չէ, չպետք է նախարարին «քավության նոխազ դարձնենք»: Արվի Դավոյանն էլ հրապարակում է Պապիկյանի լուսանկարը եւ ստատուս ծնում նրան՝ ասելով, թե Պապիկյանի իրականացրած բարեփոխումների արդյունքում նման ցավալի դեպքեր չեն կրկնվի բանակում: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն էլ երեկ լրագրողների հետ զրույցում փորձեց ապահովագրել Պապիկյանին՝ ասելով, թե՛ նա որեւէ կերպ չի կարող այս ամենի հետ կապ ունենալ: Մեզ հասած տեղեկություններով՝ ԶՊ-ում այս պահին դեռեւս Սուրեն Պապիկյանին փոխարինող անձ չեն գտնում:



**Գ** Եղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող կացարանում 15 զինծառայողի մահվան գործով 33 քննչական կոմիտեն Պաշտպանության նախարարությունից կոնկրետ փաստաթղթեր է առգրավել: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քննչական կոմիտեն վերցրել է այն հրամանը, որտեղ նշված է եղել զինծառայողների՝ կացարաններում հակահրդեհային անվտանգության կանոնները պահպանելու մասին: Հիմա ԶԿ-ն շրջայով գնում է առաջ՝ հասկանալու համար՝ թե՛ Պաշտպանության նախարարությունը համապատասխան հրահանգ է տվել, որից հետո զորամասի շտաբի պետը ՊՆ-ի համապատասխան հրահանգի մասին տեղյակ է պահել զորամասի ղեկավար կազմին, որպեսզի ապահովվեն հակահրդեհային կանոնները, ապա ովքեր չեն կատարել համապատասխան հրահանգը: Նկատենք՝ դեպից անցել է 4 օր, սակայն մինչ օրս դեռեւս գործով մեղադրյալ չկա, միայն հարցաքննվածներ են: Հիշեցնենք, որ 2023թ. հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, 33 ՊՆ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի, դրա հետեւանքով նույն վաշտի 15 զինծառայողների մահվան, մի քանի զինծառայողների՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Քաղաքացիական, ընդդիմությունը չեն հավատում իշխանության առաջադրած վարկածին, հատկապես՝ դեպքի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի տպավորիչ շարադրանքից հետո:



**Բ** Պ-ի «սրտի օլիգարխ» Նարեկ Նալբանդյանը երեկ ելել էր խորհրդարան: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ օլիգարխը ԱԺ է ելել թիկնապահների ուղեկցությամբ, սակայն թիկնապահներին թույլ չի տրվել մտնել խորհրդարանի շենքից ներս: Վերջինիս այցի ժամանակ երթեւեկություններով վերջինս խորհրդարանում հանդիպել է ԶՊ խմբակցության պատգամավոր, Եվրասիական հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Վաղարշակ Հակոբյանին, որը զբաղեցնում է հանձնաժողովի նախագահի թափուր սենյակը: Մեր աղբյուրները հայտնեցին, որ վերջինս Վաղարշակ Հակոբյանի մոտ է գնացել ԶՊ խմբակցության պատգամավոր հաշատուր Սուքիասյանի հորդորով: Ինչպես հայտնի է, Նարեկ Նալբանդյանը հենց գործող իշխանությունների աջակցությամբ է դարձել օլիգարխ: Իշխանությունների շնորհիվ նա ձեռք է բերել Ծաղկածոր քաղաքի «Գոլդեն Փեյխ» հյուրանոցային համալիրը 5 մլրդ դրամով՝ «փակովի» տարբերակով: Նարեկ Նալբանդյանը նաեւ 33 նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի՝ կալանքի տակ գտնվող առանձնատան վաճառքի գնորդն էր. այդ գործարքը կատարվել էր կասկածելի ճանապարհով եւ պայմաններում:



ԶՈՒԳԱՅԵՐ

ԱՌՐԲԵՋԱՆԸ ԶԻՆՎՈՒՄ Է, ՄԵՆՔ՝ ՈՉ

Ազգային ժողովի «Պատիվ ունեն» խմբակցության ղեկավար Տիգրան Աբրահամյանն ասում է, որ ՀԱՊԿ-ի գործադիր տնօրենը Հայաստանում չանցկացնելու ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Հայաստանի զինված ուժերը չվերագրելու մասին հոխորհանքներն ուղիղ կապ ունեն իրար հետ:



Հիշեցնենք, որ ՌԴ պաշտպանության նախարարությունը հայտարարել էր, որ ՌԴ ցամաքային զորքերի ստորաբաժանումները մասնակցելու են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) խաղաղապահ գործադիր տնօրեններին, որոնք կանցկացվեն Հայաստանում:

«Ռուսաստանի Դաշնությունից դուրս՝ Հայաստանի տարածքում, կանցկացվի ՀԱՊԿ խաղաղապահ գործադիր տնօրենների «Անխորտակելի եղբայրություն-2023» համատեղ գործադիր տնօրենները»,- ասվում էր հաղորդման մեջ: Արցախի շրջափակումից հետո Հայաստանի Հանրապետությունը մերժել էր գործադիր տնօրեններ անցկացնելու առաջարկը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է Ազգային ժողովի «Պատիվ ունեն» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանի հետ:

«Պարոն Աբրահամյան, վերջերս մտահոգություն էիք հայտնել, թե 44-օրյա պատերազմից հետո ադրբեջանական կողմը բավականին մեծացրել է իր զենքերի արսենալը, մեծ զումարներ է ծախսել դրա վրա: Այդ նույն օրն էլ հայտարարություն եղավ ՀՀ վարչապետի կողմից, թե ՀԱՊԿ գործադիր տնօրենները Հայաստանում տեղի չեն ունենա: Սրանք երկուսը մեկը մյուսի հետ որքանով են կապված այն դեպքում, երբ Ադրբեջանը զբաղված է այլ հարցերով, իսկ մենք ոչ այդքան առաջին պլանում ենք դա դիտարկում:

-Ի՞նչնախադասությունները շատ վատ դիրք են բռնել՝ հայտարարելով, որ Հայաստանում տեղի ունեցող գործընթացները՝ կլիմաներ գործադիր տնօրենների կամ այլ տեսքով, Ադրբեջանին դրոշմ են դիմելու մարտական գործողությունների կամ ագրեսիայի: Եթե Հայաստանի իշխանությունը (եւ կապ չունի, թե որ իշխանու-

թյունը) առաջնորդվի այս սկզբունքով եւ նայի, որ իր ցանկացած քայլը, որն ուղղված է ռազմական զինուժի ու պոտենցիալի մեծացմանը, չպետք է անի, քանի որ Ադրբեջանն ու Թուրքիան այլ տեսակետ կարտահայտեն եւ վատ կվերաբերվեն, ապա այդ երկիրը ուղղակի գոյատևելու հնարավորություն չի ունենա: Ադրբեջանը հայտարարում է իր զինված ուժերը մինչև 2025 թվականը Թուրքիայի բանակի հետ ինտեգրելու, միասնական բանակ ունենալու, կառավարման համակարգ ունենալու եւ մարտունակության չափանիշները եւս նրան հասցնելու մասին: Իսկ թե Հայաստանը ինչ կանի՝ էլնելով Թուրքիային եւ Ադրբեջանին սիրաշահելուց, չի անի ՀԱՊԿ գործադիր տնօրեններ, թե կանի, Ադրբեջանը իր առջեւ դրել է նպատակ եւ գնում է այդ նպատակի հետևից:

-ՀԱՊԿ-ում գործադիր տնօրենների չունենալու մասին հայտարարությունը կապված է արդյոք Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի այն բարձրագույն հայտարարությունների հետ, թե Հայաստանը քիչ քանակությամբ տեխնիկա, զինանոց եւ զինուժ պետք է ունենա:

-Իհարկե, կապված է, եւ Հայաստանը փորձում է ցույց տալ, որ ինքը ռեանալիզմով գնալու ցանկություն չունի: Սակայն այստեղ ոչ թե ռեանալիզմի հարցն է, այլ քո երկրի քաղաքացիներին, քո ժողովրդին պաշտպանելու մասին է: Երբ Հայաստանի կողմից հայտարարություն է արվում Արցախի մասին, այնպիսի տպավորություն է, թե խոսք է գնում մի երկրի մասին, որի հետ առհասարակ կապ առկա չէ, եւ Հայաստանն այդ երկրին նայում է ավստասանքով, բայց ազդելու որեւէ ազդեցություն չունի: Եթե Հայաստանն ասում է, որ Արցախին կարող է միայն սոցիալապես օգնել, իսկ անվտանգային հարցերը վերագրում է բոլորին, բացի իրենից, նշանակում է, որ հետագայում էլ Հայաստանի Հանրապետության ցանկացած մարզում սկսած Գեղարքունիքից, վերջացած Սյունիքով, նոր հարձակումներ կարող են լինել: Այդպիսիք եղել են 44-օրյա պատերազմից հետո. գիտե՞ք՝ երեք խոշոր հարձակումներ են եղել, ինչի ժամանակ, ցավոք, թե՛ գոհեր, թե՛ տարածքային կորուստներ են եղել:

Ջրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԵՐԿՐԻ ԳԱՏԱՎՈՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այս տարվա առաջին կեսին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի երկու դատավոր անդամները կլքեն իրենց պաշտոնները: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ապրիլին լրանում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներ Սերգեյ Չիչյանի եւ Անի Մխիթարյանի պաշտոնավարման ժամկետները, ուստի նրանք կհեռանան ԲԴԽ-ից: Նկատենք, որ Ստեփան Միքայելյանի պաշտոնավարման ժամկետը եւս լրանում է ապրիլին, սակայն նա նախընտրեց ավելի շուտ դիմում գրել եւ հեռանալ պաշտոնից: Այսպիսով, ԲԴԽ գիտնական անդամների բոլոր թափուր տեղերն այսօրվա դրությամբ լրացված են, իսկ դատավորների համար նոր պայքարի դաշտ է բացվում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շիրակի մարզի Անի խոշորացված համայնքում, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կնքահայրությամբ, այս տարվա մարտի 26-ին կրկին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ կացկացվեն: Նախորդ տարվա սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած ընտրություններից հետո ավագանու մանդատներ ստացած քաղաքական երեք ուժերն այդպես էլ իրար հետ լեզու չէին գտել, ու Անիում իշխանություն չէր ձեռավորվել: Շիրակի մարզի 19 բնակավայրեր ներառող Անի խոշորացված համայնքում ԶԴ-ն, որ ավագանու ութ մանդատ էր ստացել ու զիջում էր 10 մանդատ ստացած «Ազգ-համայնք» դաշինքին, ըստ երեւույթի, ցանկանում է նույն սցենարն իրագործել, ինչ որ Թալիսում արեց: ԶԴ-ն Թալիսում հնարավոր բոլոր մեթոդներով նախ տապալեց ընդդիմադիրների հավանական կուլիցիան, ապա իր թեկնածուին համայնքի պաշտոնակատար նշանակեց, ու արդեն թալիսյան երկրորդ ընտրությունների ժամանակ վերջինս համայնքապետ ընտրվեց: ԶԴ-ի Անիի ընտրություններում հաղթանակ չտարած թեկնածուն՝ Արամ Սարիբեկյանը, վարչապետի՝ 2022-ի դեկտեմբերի 8-ի որոշմամբ՝ Անիի համայնքապետի պարտականությունները կատարող պաշտոնակատար է նշանակվել: Համաձայն ԶԴ-ի կողմից գործի դրվող սցենարի՝ ենթադրելի է, որ Սարիբեկյանը մինչև մարտ ամիս տեղը տեղին կուսումնասիրի համայնքային ենթակառուցվածքները, համայնքապետի լիազորություններն ի շահ իրեն ու առաջիկա ընտրությունների գործի կղնի ու արդեն երկրորդ փորձից համայնքապետ կընտրվի: Այսինքն՝ հավանական է, որ այստեղ նույնպես քաղաքական իշխանությունն անելու է հնարավորը կառավարման ղեկն իր ձեռքը վերցնելու համար: Իհարկե, հնարավոր է, որ Սարիբեկյանը, արդար մղումներ ունենալով, համայնքապետի որեւէ լծակ էլ հանուն իրեն կամ ԶԴ-ի չօգտագործի, բայց դա պարզելու համար նախեւառաջ լրագրողների հետ պետք է շփվի:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԵՄ-Ն ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՂԱՐԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՄ ԱԳ նախարարները հավանություն են տալիս Հայաստանում ֆաղափարած առաքելության ստեղծմանը Կովկասում կարգավորմանը նույնպես համար: Այս մասին ասվում է ԵՄ խորհրդի՝ երկուսրորդի սարածած հայտարարության մեջ:

«Եվրամիության խորհուրդը (արագործ-նախարարների մակարդակով) այսօր համաձայնություն է ձեռք բերել Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության (EUMA) ստեղծման մասին, որի նպատակն է լինելու բարձրացնել վստահությունը Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւ ստեղծել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը նպաստող պայմաններ», - ասված է հայտարարությունում:

ԵՄ արտաքին ծառայության ղեկավար Ժոզեպ Բորելի խոսքով՝ ԵՄ առաքելության ստեղծումը «նոր փուլ է բացում Հավաքական Կովկասում ԵՄ ջանքերում»:

«Առաքելության մանդատն է իրականացնել մշտական պարեկություն եւ (Բորյունելին) զեկուցել իրավիճակի վերաբերյալ, ինչը կբարձրացնի ԵՄ-ի կողմից տեղում իրավիճակի ըմբռնումը: Առաքելությունը կնպաստի Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի միջնորդական ջանքերին», - ասված է հայտարարության մեջ:

Առաքելության մանդատը նախատեսված է երկու տարով, նրա ղեկավարը կնշանակվի մոտ ապագայում: Բաքուն, ի տարբերություն նախորդ երկամյա առաքելության, այս մեկին հավանություն չի տվել, ավելին՝ Ադրբեջանի նախագահը օրեր առաջ քննադատել էր նախաձեռնությունն ու պնդել, թե Եվրոպացիներն իրենց խաբել են:

«Մենք Պրահայում քննարկել ու համաձայնել էինք, որ այդ առաքելությունը լինելու է կարճաժամկետ, քառասուն մարտից բաղկացած եւ շարունակվելու է միայն երկու ամիս, բայց հետո ինչ? - ինչ պատճառներով այս համաձայնությունը խախտվեց, ինչը, անշուշտ, խիստ հիասթափեցնող է: Մենք լուրջ մարդիկ ենք, եւ եթե պայմանավորվել ենք, թեկուզ՝ բանավոր, պետք է խոսքը պահել: Ի՞նչ է նշանակում երկարաձգել առաքելությունը առանց մեզ հետ համաձայնեցնելու. չէ՞ որ դա մեր սահմանների մոտ է լինելու», - ասել էր Իլհամ Ալիևը:

Ալիևը նաեւ պնդել էր, թե այդ քայլով Եվրամիությունը անվտանգությանը չի նպաստում, փոխարենը կասկածի տակ է դնում Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի միջնորդությամբ սկսված բանակցությունները Հայաստանի հետ: Դրանք, ի դեպ, դադարել են դեռ անցած ամիս, երբ Բաքուն չեղարկեց դեկտեմբերի յոթին նախատեսված հանդիպումն ու հրաժարվեց մեկ սեղանի շուրջ նստել Ֆրանսիայի նախագահի հետ: Հիմա Ալիևը սպառնում է նույնը անել նաեւ Եվրամիության դեպքում:

Ավանակավում է, որ Եվրամիության դիտորդները Հայաստան կժամանեն հաջորդ ամիս, առաքելությունը կսկսվի փետրվարի 20-ից:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՊԻԿՅԱՆԸ ՉԵԿԱՎ

ԿԱՐԵՎՈՐ ԲՆՆԱՐԿՈՒՄԸ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՑԱՎ

ԿԻՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումներով կառավարության մի շարք ներկայացուցիչներ այս օրերին գործողումների են մեկնել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը փետրվարի 6-10-ը Ֆրանսիայի Հանրապետություն կգործուղվի: Նա Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ինքնարտահայտման ձեռքի բազմազանության պաշտպանության և խրախուսման միջկառավարական կոմիտեի 16-րդ նստաշրջանին կմասնակցի: Տեղեկացանք, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը ՀՀ բյուջեից է կատարվելու: Հունվարի 23-ին 5-օրյա այցով (մինչև հունվարի 27-ը) Գերմանիայի Դաշնային Հանրապետություն է մեկնել Արմավիրի փոխարգայետ Առնակ Ավետիսյանը: Նա, ըստ վարչապետի որոշման, Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ դաշնային երկրամասում «երկրորդ համազործակցության մի շարք հարցեր կքննարկվի»: Այցի հետ կապված բոլոր ծախսերը հրավիրող կողմն է հոգում: Երեկ մեկշաբաթյա գործուղման նաեւ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Զոն Սինսյանն է մեկնել: Նա գրասենյակի աշխատակից Գրետա Մազանյանի հետ հունվարի 23-30-ը Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում Նիժնի Նովոգորոդում, Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում, համայնքային կառույցների ու երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներ կունենա: Այցերի հետ կապված բոլոր ծախսերը կատարվելու են ՀՀ պետբյուջեի միջոցներից:

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՒԱԶ

Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքում գինվորների կացարանի հրդեհից մի քանի օր հետո միայն իշխանության ներկայացուցիչները շտապեցին այցելել այնտեղ: Նրանց թվում էր նաեւ ՀՀ Ազգային ժողովի ԶՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, որն ընդամենը մեկ ամիս առաջ հպարտանում էր, թե դիրքերի այսպիսի կահավորում նախկինում չի եղել, և գինվորների կյանքեր կփրկվեն: Ունենք, սակայն, խայտառակ վատ կահավորված առաջնագիծ, որտեղ գինվորները բենզինով են վառարան թեժացնում: Ուշագրավ է, որ Անդրանիկ Քոչարյանը նախկինում հաճախ է այցելել Գեղարքունիքի մարզի դիրքեր, հանդիպել 2-րդ բանակային կորպուսի հրամանատարին, լուսանկարներ հրապարակել նրա հետ: Հետաքրքիր է՝ առաջնագիծ գնալիս նա չէր նկատել արդյոք, թե ինչ պայմաններում են ապրում մեր գինվորները, թե Քոչարյանի համար այդ պայմանները նորմալ են եղել: Հիշեցնենք, որ հրդեհի ողբերգական դեպքից ժամեր անց քավության նոխազ դարձավ հենց 2-րդ բանակային կորպուսի հրամանատարությունը՝ ի դեմս հրամանատար Վահրամ Գրիգորյանի: Նա Անդրանիկ Քոչարյանի մտերիմն էր, և Քոչարյանն ամենուր Գրիգորյանի գովքն էր անում: Հիմա հարց է առաջանում. եթե իրապես 2-րդ բանակային կորպուսի հրամանատարական անձնակազմն այդչափ պրոֆեսիոնալ էր, ինչո՞ւ է մեր առաջնագիծը այդքան տխուր վիճակում:

**Ազգային ժողովի մարզու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը երեկ խորհրդարանում քննարկում էր կազմակերպել «ՀՀ Չինված ուժերի ներկա վիճակի, բանակում առկա խնդիրների, դրանց լուծման ընթացքի և ուղիների վերաբերյալ» քննարկով:**

Քննարկմանը հրավիրված են եղել ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները, սակայն ՊՆ ներկայացուցիչները չեն եկել Նիստին, և, հետևաբար, Նիստը տեղի չունեցավ: Բացման խոսքով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը. Երեկվա քննարկումը, որը տապալվեց ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ջանքերով, վկայությունն է այն պարզ իրողության, որ հայկական բանակը իրապես բարձրորդի վիճակում է: Հունվարի 17-ին հրավեր է ուղարկվել ՀՀ ՊՆ-ին և ՀՀ Ֆինանսին՝ ակնկալելով կազմակերպել քննարկում, թե ինչու է Հայաստանում զինծառայությունը կորցնում իր գրավորությունը, և մարդիկ զանգվածաբար լքում են բանակը: Նախնական հաստատում ունեցնելով երկու կառույցից էլ, բայց երեկ՝ նշանակված հանդիպումից 1 ժամ առաջ, Պապիկյանից ստանում են գրություն, թե նպատակահարմար չի գտնում այսօրվա (երեկվա-խմբ.) քննարկմանը մասնակցելը կամ որտե՞ս ներկայացուցիչ ուղարկել: ՀՀ Ազգային ժողովը քաղաքացիների քվեով ձեռնադրված մարմին է, որին հաշվետու է կառավարությունը, և այս պայմաններում ասել, որ խորհրդարանական երկիր Հայաստանում գոյություն ունի խորհրդարանական վերահսկողություն, նշանակում է ուղղակի ստել: ՊՆ-ն աշխատում է միայն քաղաքական պատգամավորների հետ, դրա համար էլ ունենք առաջնագիծ այնպիսի խայտառակ պատկեր, ինչպիսին տեսանք ողբերգական հրդեհի օրը՝ հունվարի 19-ին, Ազատ գյուղում: Երբ մոտ երկու տարի առաջ երկրի թիվ մեկ պատասխանատուից հետաքրքրվեցի մեր առաջնագիծի վիճակով, Նիկոլ Փաշինյանը պատասխանեց, թե լավ կահավորված առաջնագիծը տեսանելի չէ: Սա՞ էր ձեր լավ կահավորված առաջնագիծը. գինվորները քնել էին ճաղակներով և մի խրճիթի մեջ, 21-րդ դարում տաքանում



են փայտի վառարանով, այն միացնում են բենզինով, անմարդկային պայմաններում... Չինծառայողների իրավունքները պետք է քննարկելիք այսօր ՊՆ-ի հետ, բայց չեկան, խուսափեցին առերեսվել իրականության հետ, թեկուզ դժուրակ ձեռագրվել: Բայց մի արձանագրում, այնուամենայնիվ, իրավունքների մասով պիտի անեմ հիմա. Քննչական կոմիտեի պաշտոնական հաղորդագրությունն են հիշեցնում. «ՀՀ ՊՆ Ն գործառնախի ինժեներասակրավորային վաշտը 2021 թվականի մայիսի 13-ից տեղակայվել է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տներին մեկուկ: Տունը բաղկացած է եղել նախարարից և երկու սենյակներից, որոնցից մեկը ծառայել է որպես զինանոց, իսկ մյուսը՝ գորանոց, որտեղ տեղադրված են եղել երկհարկանի զինվորական մահճակալներ: Տան ջեռուցումն իրականացվել է փայտի վառարանի միջոցով, որը տեղադրված է եղել նախարարի մոտ:»:

Հիմա ընթերցում են ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության և կանտոնացից մի հատված, որը հստակ կարգավորում է զինծառայողներին զորանցներում տեղավորելու և այլ հարցեր: Ըստ նշված կանոնագրի, մասնավորապես՝

1. Ժամկետային ծառայության զինծառայողները տեղավորվում են զորանոցում,
2. մահճակալները պետք է տեղադրվեն դրսի պատերից 50 սմ հեռու,
3. արգելվում է որևիցե մեկին բնակվել ճաշարաններում, հացի գործարաններում,

րում, բուժկետներում, կաթսայատներում, արտադրական և պահեստային շինություններում, ակումբներում, հավաքականներում և անգարներում, ինչպես նաեւ զորանոցի ուսումնական և ծառայողական շինություններում:»:

Հիմա ով պետք է պատասխան տա այս իրավիճակի համար. ինչո՞ւ էին զինվորները բանտարկված ճաղակներով և մեկուկ այն կողմ: Նիկոլ Փաշինյանը հիմա էլ չի կարող ասել, որ թիվ մեկ պատասխանատուն է, բայց մեղավորը չէ: Թերեւս հենց այդ գիտակցումից խուսափելու համար էր Փաշինյանը հրապարակավ այնպիսի մանրամասնությամբ պատմում տեղի ունեցած հրդեհի ծագումը, որ թվում էր՝ այնտեղ է եղել: Դա ոչ այլ ինչ էր, քան ուղղորդում ՀՀ քննչական մարմիններին: Այս ուղղորդումից հետո Փաշինյանը հաջորդ օրը շտապեց տարբեր մարզեր՝ ողջունելու պարեկներին: Սա նշանակում է, որ պետական մակարդակով առավել կարեւորվում են մեր երկրում պարեկները, որոնք պիտի պահեն Փաշինյանի իշխանությունը, քան զինծառայողները, որոնք մեր երկրի անվտանգության թիվ մեկ երաշխավորն են: Վերջում ես մեկ անգամ ցավով պիտի արձանագրեմ, որ ՊՆ-ի հրաժարումը այս քննարկումից ի ցույց է դնում Նիկոլ Փաշինյանի իշխանության անլրջությունը և կառավարման տկարությունը: Ափսոս մեր զինվորները...

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԳԻՄՈՒՄ

ՀՀ ՄԻՊ Քրիստինե Գրիգորյանը հրաժարականի դիմում է ներկայացրել ԱԺ նախագահին:

Նշենք, որ արդեն տեսական ժամանակ է՝ շրջանառվում էին Գրիգորյանի հրաժարականի մասին տեղեկությունները: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՄԻՊ-ը տարածաշրջաններ է ունեցել Փաշինյանի հետ, ինչն էլ հրաժարականի պատճառ է դարձել:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Քրիստինե Գրիգորյանը կգնա ԲԴԿ. «Մարդու իրավունքների պաշտպան Զրիստինե Գրիգորյանն այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ սույն թվականի հունվարի 23-ին օրենսդրությամբ սահմանված կարգով հրաժարականի դիմում է ներկայացրել Ազգային ժողով:

Ըստ օրենսդրության՝ տվյալ դեպքում Պաշտպանի լիազորությունները դադարում են վերջինիս կողմից հրաժարականի դիմումը ներկայացնելուց ոչ ուշ, քան մեկ

ՉԱՔԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐԿԻՆ ԻՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՆՈՐ ԱՎՏՈՄԵԲԵՆԱՆԵՐ՝ ՓԾ-ԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Փրկարար ծառայությունը որպես նվիրատվություն ստացել է երկու միավոր Ford F250 (pickup) մակնիշի տրանսպորտային միջոցներ: Բանն այն է, որ Փրկարար ծառայությունը հանդիսանում է Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության աջակցության ծրագիր իրականացնող գործընկեր, որը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության՝ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային անվտանգության ոլորտում համագործակցության ծրագրի կողմից: Եվ հենց նշված ծրագրի շրջանակներում էլ

Փրկարար ծառայությունը որպես նվիրատվություն ստացել է երկու միավոր Ford F250 (pickup) մակնիշի տրանսպորտային միջոց:

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ՄՏԲԱՄԲՈՒՐԳ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի որոշմամբ՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեղորգյանը փետրվարի 1-2-ը կգործուղվի Ստրասբուրգ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ընդդիմադիր պատգամավորը Ստրասբուրգում մասնակցելու է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) ժողովրդավարության և կառավարման կոմիտեի կառավարման հարցերով աշխատանքային խմբի Նիստին:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործուղման հետ կապված բոլոր ծխասերը՝ ճանապարհածախսը, գիշերավարձն ու օրապահիկը, ՀՀ պետբյուջեի հաշվին են կատարվելու:

1862 ՆՅՈՒԹ

# 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2022թ. ընթացում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրավասու այլ մարմիններին սկզբնական տեղեկատվություն փոխանցելու, ինչպես նաև նախաձեռնված ֆեալական վարույթների ցածր վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում օրենքով վերապահված գործառնությունների իրականացման արդյունքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ պետական իրավասու տարբեր մարմիններին փոխանցվել է 1862 նյութ, որոնց հիման վրա նախաձեռնվել է 470 քրեական վարույթ:

Տնտեսական ոլորտում իրականացված խախտումների վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններ է ուղարկվել 249 նյութ, որոնց մի մասը դեռ գտնվում է քննության փուլում, դրանցից 117-ը՝ պաշտոնական դիրքի չարաշահումների և յուրացումների, 92-ը՝ տնտեսական գործունեության զանազան խախտումների, այդ թվում՝ մաքսանենգ կամ կեղծ ապրանքագրերով ներմուծումների, ինչպես նաև հարկերից և տուրքերից խուսափումների, 30-ը՝ աշխատավարձի տրամադրում իրականում չաշխատող անձի, 10-ը՝ փոխհատուցման անօրինական տրամադրումների մասին:

Թմրանյութերի և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության ոլորտում իրականացված խախտումների վերաբերյալ ՀՀ պետական իրավասու մարմիններ է ուղարկվել 84 նյութ, որոնց մի մասը դեռ գտնվում է քննության փուլում, դրանցից 45-ը՝ թմրանյութերի և հոգեմետ նյութերի մաքսանենգ ներմուծման կամ իրացման, 39-ը՝ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի անօրինական օգտագործման վերաբերյալ:

Հաշվետու տարում ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչների վարույթում եղել են 1105 քրեական վարույթներ, որից Դեպարտամենտի քննիչների կողմից նախաձեռնվել է 443 քրեական վարույթ, 42-ը անջատվել են այլ վարույթներից, 268-ը ստացվել է այլ մարմիններից, վերսկսվել է 278 քրեական վարույթ, 5-ը հարուցվել է տվյալ տարածքը սպասարկող դատախազի կողմից, 1-ը դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ քննության, իսկ թվով 68 քրեական գործ 2021թ-ից փոխանցվել է 2022թ.:

Հաշվետու ժամանակահատվածում քննչական դեպարտամենտի վարույթում



քննված քրեական վարույթներից դատարան է ուղարկվել 79 վարույթ՝ 116 անձանց նկատմամբ, կարճվել է 129 քրեական վարույթ՝ 10 անձանց նկատմամբ, կասեցվել է 54 քրեական վարույթ, 435 քրեական վարույթ՝ 105 անձանց վերաբերյալ, ուղարկվել է՝ ըստ քննչական ենթակայության, 116 վարույթ միացվել է ԶԴ-ում քննվող այլ վարույթների, 292 քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

Հիշյալ ժամանակահատվածում ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաքննություն իրականացված քրեական վարույթներով, այդ թվում՝ նախորդ տարիներից փոխանցված վարույթներով, ըստ նախնական գնահատման,

հանցագործությամբ պատճառված ընդհանուր վնասի չափը կազմել է 34.871.179.017 ՀՀ դրամ, որից պետությանը պատճառված նախնական վնասի չափը կազմել է 32.144.587.787 ՀՀ դրամ, իրավաբանական անձանցը՝ 704.639.069 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանցը՝ 2.021.952.161 ՀՀ դրամ:

Ընդ որում՝ նշվածներից, այդ թվում՝ ավարտված վարույթներով, նախաքննության փուլում վերականգնվել է ընդհանուր 14.351.883.303 ՀՀ դրամ, որից միայն 2022 թվականի ընթացքում՝ ընդհանուր 5.278.456.073 ՀՀ դրամ, որից պետությանը պատճառված վնասից՝ 5.007.884.856 ՀՀ դրամ, իրավաբանական անձանցը՝ 270.571.217 ՀՀ դրամ:

ԼՈՒՐԵՐ

## ՄԱՆՐԱՄԱՆԵՐ՝ ԳԵՊԻՑ

Հունվարի 15-ին սպանություն էր տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ոստիկաններն ու քննիչները Մեյմանդարի շուկայում կանաչեղենի վաճառքի բաժնում տաղավարներից մեկի մոտ, հայտնաբերել էին տղամարդու դի՝ պարանոցի մասում սուր կտրող-ծակող առարկայի հետքերով: Սպանվել էր Լուռու մարզի բնակիչ, 50-ամյա Սարգիս Ա-ն, իսկ, ահա, ենթադրյալ հանցագործն Անդրանիկ Կ-ն է, որը կալանավորված է: Իսկ ի՞նչն էր եղել սպանության պատճառը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Անդրանիկն իր կնոջ հետ պարբերաբար ապրանքներ է մատակարարել շուկա, հետո սկսել է խանդի տեսարաններ սարքել, որից հետո դանակահարել է սպանել է Սարգիս Ա-ին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՇԵՐԹԸ ԱԺ ՊԱՏՏԱՄԱՎՈՐՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին կետի, 2023 թվականի հունվարի 23-ին ՀՀ ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին է ներկայացրել ԱԺ պատգամավոր Ա.Չ.-ի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիր: Ըստ նույն կետի պահանջի՝ միջնորդագրին կցվել է նաև պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ա.Չ.-ն, ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննված քրեական գործով որպես փորձագետ ընդգրկված լինելով Ա.Ս.-ին ծանր էր համաձայնություն տալու հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաքննչական փորձաքննության հանձնաժողովի կազմում, 2017 թվականի փետրվարի 8-ին ստորագրել է կրկնակի դատաքննչական հանձնաժողովային փորձաքննության ակնհայտ կեղծ եզրակացությունը: ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ նախորդ տարի էր գրել, որ դատախազ Աննա Վարդապետյանը կմտնի ԱԺ երեք քրեական հետապնդում է սկսելու նաև Չարչյանի նկատմամբ: Գրել էինք, որ, ամենայն հավանականությամբ, իրավապահ համակարգը քրեական հետապնդումը Չարչյանի նկատմամբ սկսելու է «Հաց բերողի» մահվան դեպքով հարուցված քրեական վարույթի շրջանակներում:

## ՀԵՏԱԽՈՒԶՎՈՐԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, հունվարի 13-ին Մուսալեռ գյուղի Բարդամյան փողոցում հայտնաբերել է բաժնի են տեղափոխել 36-ամյա Ալբերտ Շ.-ին, որը ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով: Խափանման միջոցը ստորագրություն: Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին:

ՔՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՐԻԽՈՒՄԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ծառայողները կառույցի հիմնական պատի եւ բնակելի մասնաշենքի միջնամասում հայտնաբերել են Մարիխուանայի նմանվող զանգված:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունից հայտնում են, որ հունվարի 21-ին՝ ժամը 13:10-ի սահմաններում, «Վանաձոր» ՔԿԳ ծառայողները տեղանքի գննություն են իրականացրել՝ իրացնելով նույն հիմնարկի օպերատիվ բաժնում ստացված տեղեկությունները:

Տեղազննության արդյունքում նշված տարածքից հայտնաբերվել է ներետված

փաթեթ, որում եղել է Մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող, 3,1 գրամ քաշով դեղնականաչավուն զանգված:

## Ի՞ՆՉ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող կացարանում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով նախաձեռնված քրեական վարույթով կհարցաքննվեն Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության աշխատակիցները: Մասնավորապես, նախաքննական մարմինը որոշակի անճշտություններ է հայտնաբերել փրկարարների կողմից արված հայտարարություններում և նրանց եւս կհարցաքննի, թե քանի անձ է գետնին ընկած եղել, քանիսն են մահճակալի վրա մահացած հայտնաբերվել, և նման այլ հարցեր: Դեպքից անցել է 4 օր, սակայն մինչ օրս դեռեւս գործով ձերբակալված չկա:

Հիշեցնենք, որ 2023թ. հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի, դրա հետեւանքով նույն վաշտի 15 զինծառայողների մահվան, մի քանի զինծառայողների՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 20-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 116 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:



ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՈՎՍԵՍՈՒՄ ԱՆՀԱՆԳԻՍ Է

Վերջին օրերին Բերդ խոշոր համայնքի սահմանամերձ Մովսես գյուղի բնակիչները խիստ անհանգիստ են: Մովսես բնակավայրի վարչական ղեկավար Զավեն Պապյանը հայտնեց, որ հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը Մովսեսի բնակիչները գյուղում նկատել են անծանոթ 3-4 հոգու այդ գիշեր Մովսես գյուղի աջ մասում գտնվող Յունուտ թաղամասում անհայտ անձինք ծակել են կայանած 7 ավտոմեքենաների անվադողերը: Մովսեսում կայանած, գյուղին պատկանող հացահատիկահավաք կոմբայնի փոքր անվադողը ես նստած է վարչական ղեկավարը չգիտի, թե այդ անվադողը նույնպես չարագործներն են ծակել, թե կոմբայնի անվադողն այլ պատճառով է նստել: Հունվարի լույս 20-ի գիշերը նույն Յունուտ թաղամասում անհայտ անձը կամ անձինք հրկիզել են Մովսեսի բնակիչն պատկանող, ավտոմեքենայի քարշակում դարձված 30 հակասանակեր խոտը: Հաջորդ օրը՝ հունվարի լույս 21-ի գիշերը, Յունուտ թաղամասում Մովսեսի բնակիչներից մեկը, իր տան երկրորդ հարկից իջնելով, նկատել է անծանոթ մի տղամարդու եւ ծայն է տվել՝ ո՛վ էս անծանոթն առանց պատասխանելու փախուստի է դիմել: Այս ամենը սահմանամերձ գյուղի բնակիչների մեջ անհանգստություն է առաջացրել: Մովսեսը Ադրբեջանի հետ 18 կիլոմետր սահման ունի, Յունուտ թաղամասը հայ-ադրբեջանական սահմանից հեռու է ընդամենը 500 մետր: Մովսեսի վարչական ղեկավարն ասաց, որ Մովսեսի բնակիչներն անհանգստացած են, դիմել են ոստիկանություն: Ոստիկանության, փրկարար ծառայության աշխատողների եւ մովսեսցիների համատեղ ուժերով գյուղում գիշերային հերթապահություն, շրջազայություն է իրականացվում: Զ. Պապյանը հայտնեց, որ հունվարի լույս 23-ի գիշերը Մովսեսում արտառոց դեպքեր չեն կատարվել:

ՊԱՐԵՆՆԵՐԻՑ ՎԱԽԵՑԵԼ ԵՆ

Հունվարի 21-ին Տավուշի մարզում ծառայությունը սկսեց պարեկային ծառայության ստորաբաժանումը: Այդ օրը՝ կեսօրից հետո, Նոյեմբերյան քաղաքում արտառոց վիճակ էր: Քաղաքի փողոցները դատարկվել էին, միջպետական ավտոճանապարհին Նոյեմբերյանցիների շատ քիչ ավտոմեքենաներ էին երթնելում: Նոյեմբերյանցի վարորդների մի մասը վարորդական իրավունքի վկայական չունի, ոմանք էլ ավտոմեքենաների տեխնիկական զննություն, պարտադիր պետական ապահովագրություն չեն կատարել, վարորդներ կան, որոնք սովոր են ավտոմեքենան վարել առանց ամրագրտին կապելու: Նոյեմբերյանում պարեկային ծառայության հայտնվելը այդ վարորդներին ստիպել է շառից հեռու մնալու մտայնությամբ ավտոյով փողոց դուրս չգալ: Նոյեմբերյանի տարածաշրջանի բնակիչները հայտնում են, որ նախկինում պետավտոտեսչության ավտոմեքենաները հազվադեպ էին շեղվում Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհից, Նոյեմբերյանի համայնքի գյուղերը մտնում, իսկ պարեկները նման խնդիր չունեն, գյուղերն են մտնում: Նոյեմբերյանի բնակիչները պատմեցին, որ հունվարի 21-ին պարեկները ծառայողական ավտոմեքենայով հետապնդել են դեպի սահմանամերձ Դովեղ գյուղ ընթացող ավտոմեքենային:

Ռ. ՍԱՐԳՅԱՆ Տավուշ

ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ

ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Արեւիկից Հայաստան ուղարկված մարդասիրական օգնության ծավալները բավականին ավելացել են:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ անցյալ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին որպես մարդասիրական օգնություն Հայաստան է ուղարկվել 85 մլն 914 հազար 800 դոլար: 2021 թվականին Հայաստան ստացվել է 35 մլն 687 հազար 400 դոլարի չափով մարդասիրական օգնություն: Հայտնի է, թե որ երկրներն են մարդասիրական օգնություն ուղարկել Հայաստանին:

Ի դեպ, տեղեկացնենք, որ Հայաստանին մարդասիրական օգնություն ուղարկածների թվում են նաեւ Եվրամիության անդամ շատ երկրներ:

Գերմանիայից, օրինակ, Հայաստան ուղարկված մարդասիրական օգնության ծավալները նվազել են. նախորդ տարվա 11 ամիսներին ստացվել է 2 մլն 520 հազար դոլարի չափով օգնություն, մինչդեռ 2021 թվականին նույն երկրից մեր հանրապետություն եկել է 3 մլն 195 հազար 300 դոլարի չափով մարդասիրական օգնություն: Մեր բարեկամ Ֆրանսիայից մարդասիրական օգնություն ՀՀ եկել է 2 մլն 19 հազար 300 դոլարի չափով: Ֆրանսիայից 2021 թվականի հունվար-նոյեմբերին Հայաստան եկել էր 1 մլն 566 հազար 600 դոլարի մարդասիրական օգնություն: Անցյալ տարվա հունվար-նոյեմբերին Հայաստանը Շվեյցարիայից 4 մլն 222 հազար 500 դոլարի չափով մարդասիրական օգնություն է ստացել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱՊՀ երկրներից Հայաստանը 287 հազար 300 դոլարի չափով մարդասիրական օգնություն է ստացել, հիմնական հատվածը՝ Ռուսաստանից: Ուկրաինայից անցյալ տարվա 11 ամիսների ընթացքում Հայաստան ստացվել է 28 հազար 200 դոլարի չափով մարդասիրական օգնություն: Ռուսաստանից Հայաստան եկել է 259 հազար



դոլարի չափով մարդասիրական օգնություն: Մեկ տարվա ընթացքում Ռուսաստանից եկող մարդասիրական օգնության ծավալը ավելացել է: Բացի այս, պաշտոնական փաստաթղթերից տեղեկացանք, որ Հնդկաստանից ստացվող մարդասիրական օգնության ծավալներն են զգալի ավելացել. 2021 թվականին Հնդկաստանից ՀՀ մտել է 1 մլն 975 հազար դոլարի չափով մարդասիրական օգնություն, իսկ

նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 7 մլն 329 հազար 800 դոլար: Հինաստանից ստացվող մարդասիրական օգնության ծավալներն են պակասել. 2021 թվականի հունվար-նոյեմբերին Հինաստանից որպես մարդասիրական օգնություն ՀՀ ստացվել է 5 մլն 749 հազար 500 դոլար, իսկ 2022 նույն ժամանակահատվածում՝ 3 մլն 568 հազար 500 դոլար: **ՄՅՈՒՆԷ ՀԱՍՔԱՐԶՈՒՄՅԱՆ**

ԼՈՒՐԵՐ 6 ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿՕՏԱՐՎԵՆ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն դիմել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ քրեակատարողական ծառայության հաշվեկշռում հաշվառված 6 միավոր տրանսպորտային միջոցները պետք է հանձնվեն ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Կոմիտեն նաեւ գրությամբ միաժամանակ տեղեկացրել է, որ նշված տրանսպորտային միջոցները գրավի կամ արգելանքի առարկա չեն հանդիսանում:

Կոմիտեի կողմից մաշակվել է «Գույք հետ վերցնելու եւ ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, համաձայն որի՝ նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հաշվեկշռում հաշվառված, պետական սեփականություն հանդիսացող 6 միավոր տրանսպորտային միջոցները հետ վերցնել եւ ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ

ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հետազայում օտարելու նպատակով: **ՆԱԻՐԱ ՀՈՎԿՅԱՆՆԻՍՅԱՆ**

ԱԳՐԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԶՈՒՐԸ ԶԿՏՐԵՑ

2017թ.-ին նախատեսվում էր Տավուշի մարզի սահմանամերձ գոտում կառուցել Հախումի եւ Կողբի ոռոգման ջրամբարները եւ այդ ջրամբարներում կուտակել ընդհանուր առմամբ 2 միլիոն խորանարդ մետր ջուր, սակայն այդ ջրամբարների կառուցման ծրագրերը մնացին թղթի վրա: Նիկոլ Փաշինյանի իշխանության ջրօրակառուցման տարիների ընթացքում Տավուշի մարզում ոչ մի ջրամբար չի կառուցվել: Տավուշի մարզի Աղստե, Ոսկեպար, Հախում, Քարահան եւ այլ գետերի քաղցրահամ ջրերը շարունակում են հոսել Ադրբեջան, որտեղ կուտակվում են ջրամբարներում եւ ոռոգում են Ադրբեջանի շրջանների դաշտերն ու այգիները: Վերջին տարիներին ամռանը Ադրբեջանում միշտ երաշտ է լինում, Տավուշի սահմանագոտում ոռոգման ջրամբարների կառուցումից, դրանք ջրով լցնելուց հետո Ադրբեջանը ոռոգման ջրի առումով որոշակի կախվածություն կունենար Հայաստանից:

ՄՊԱՆԵԼ Է ՈՒՐԻՇԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Իջեւան քաղաքի բնակիչ, ոչ մի տեղ չաշխատող, 1959թ. ծնված Վարագդատ Խեչյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, Իջեւանի բնակիչ Սերժիկ Ավետիսյանի հետ գտնվելով ոչ բարիդրացիական հարաբերության մեջ, վերջինիս երկու գլուխ խոշոր եղջերավոր անասունը սպանելու նպատակով 2021թ. հուլիսի 19-ին ժամը 06:00-ի սահմաններում, իրեն պատկանող ՄՌ-27 ԵՍ տրամաչափի որսորդական հրազենով սպանել է Իջեւան քաղաքի Աղսու տարածքում գտնվող իր այգու տարածք մտած երկու գլուխ խոշոր եղջերավոր անասունի, որոնք, իր պատկերացմամբ, պատկանել են Ս. Ավետիսյանին, սակայն հետազայում պարզվել է, որ դրանք պատկանում են Իջեւանի բնակչուհի Կարինե Բեգլարյանին:

Վ. Խեչյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: **ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ**

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 27 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 40-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՄՆ-Ն՝ ԵՐԱՇՏԻ ԱՌՋԵՎ

Ամերիկայի Միացյալ Նահանգների արեւմտյան հատվածը, հնարավոր է, երկարատեւ երաշտի փաստի առջեւ կանգնի, ինչը ջրային ռեսուրսների վրա բավական լուրջ ազդեցություն կթողնի: Այս մասին գրում է Newsweek լրատվականը:

Մասնագետների կարծիքով՝ եթե առաջիկա տասնամյակների ընթացքում իրավիճակը չփոխվի, ու համընդհանուր անապատացման դեմ քայլեր չձեռնարկվեն, ապա այս իրավիճակն արդեն կհանգեցնի:

«Եվ մեկ կամ երկու տասնամյակ, ու երաշտը ոչ միայն գրունտային ջրերի պակասի, այլ նաեւ հողերի անապատացման կհանգեցնի, ինչն էլ իր հերթին մեծ ազդեցություն կունենա հասարակական ենթակառուցվածքների աշխատանքի վրա»,- լրատվականի հետ զրույցում ասել է ԱՄՆ Էկոլոգիայի ու Էներգիայի մենեջմենթի ինստիտուտի տնօրեններից մեկը՝ Ջոնթան Դիսոնը:

Համաձայն U.S. Drought Monitor-ի (Հյուսիսային Ամերիկա երկրագնդում գրանցվող երաշտի մասին հարթակ է-Ս.Վ.) հրապարակած տվյալների՝ Ամերիկայի ցամաքային հատվածի 65 տոկոսն այս պահին արդեն ինչ-որ չափով երաշտի վտանգի առաջ է կանգնած:

Պարբերականը գրում է, որ երաշտից ամենից շատ տուժած նահանգները Յուտան, Օրեգոնը, Նեբրասկան, Կանզասն ու Օկլահոման են:

Ս. ՎԱՐՈՂՈՍՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐԱԾԲ

Armlur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Երեւան քաղաքի Արաբկիր, Զարյան փողոց 22 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկից 425 հազար 323 դրամ սկզբնական արժեքով, 142.9 քառ. մետր մակերեսով տարածքը կամրացվի ՀՀ վիճակագրական կոմիտեին:

Այդ տարածքը հետ կվերցվի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեից:

Մեկ այլ որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, համայնք Նոյակերտ, Նոյի փողոց 29 հասցեում գտնվող, 1340.89 քառ. մետր մակերեսով շենքը եւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.16597 հա հողատարածքը հետ կվերցվի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոյակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից եւ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով կամրացվի «Նոյակերտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023-ի փետրվարի 07-ին ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից Բ. Երեւան, Չարենց 12 Ե., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հողանդական եղանակով:

Թիվ 33 լոտ՝ սկսյա գարդեր՝ 5,9 ընդհանուր քաշով (զուտ քաշը 5 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 69.200 ՀՀ դրամ: Թիվ 34 լոտ՝ սկսյա գարդեր եւ ջարդոն՝ 260,4 գր. ընդհանուր քաշով, որից 11,3գր. ընդհանուր (զուտ քաշը 11,1 գր.) քաշով սկսյա գարդերը եւ ջարդոնը՝ 500 հարգի, 129.500 ՀՀ դրամ, 24,9 գր. քաշով սկսյա գարդերը՝ 875 հարգի, 517.200 ՀՀ դրամ, 6,9 գր. քաշով սկսյա գարդերը՝ 958 հարգի, 156.700 ՀՀ դրամ, 217,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 216 գր.) սկսյա գարդերը՝ 585 հարգի, 2.766.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 3.570.200 ՀՀ դրամ: Թիվ 35 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 74 գր. ընդհանուր քաշով, որից 4,7գր. քաշով սկսյա ջարդոնը՝ 500 հարգի, 54.800 ՀՀ դրամ, 69,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 67,9 գր.) սկսյա ջարդոնը՝ 585 հարգի, 940.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 995.000 ՀՀ դրամ: Թիվ 36 լոտ՝ սկսյա ջարդոն եւ գարդ՝ 56,2 գր. ընդհանուր քաշով, որից 51,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 49,5 գր.) սկսյա ջարդոնը՝ 585 հարգի, 685.400 ՀՀ դրամ, 2,9 գր. քաշով սկսյա ջարդոնը՝ 500 հարգի, 33.800 ՀՀ դրամ, 1,8 գր. քաշով սկսյա գարդը՝ 750 հարգի, 31.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 751.100 ՀՀ դրամ:

Թիվ 37 լոտ՝ սկսյա գարդեր՝ 27,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 27 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 373.900 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 7,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 96.900 ՀՀ դրամ: Թիվ 39 լոտ՝ սկսյա գարդեր՝ 23,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 23 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 318.500 ՀՀ դրամ: Թիվ 40 լոտ՝ սկսյա գարդեր՝ 4,7 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 65.000 ՀՀ դրամ: Թիվ 41 լոտ՝ սկսյա գարդեր՝ 17,1գր. ընդհանուր քաշով, որից 11,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 11 գր.) սկսյա գարդերը՝ 585 հարգի, 152.300 ՀՀ դրամ, 5,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5,3 գր.) սկսյա գարդերը՝ 500 հարգի, 61.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 214.100 ՀՀ դրամ: Թիվ 42 լոտ՝ սկսյա գարդեր՝ 14,6 գր. ընդհանուր քաշով, որից 10,9 գր. ընդհանուր քաշով



(զուտ քաշը 10 գր.) սկսյա գարդերը՝ 585 հարգի, 138.400 ՀՀ դրամ, 3,7 գր. քաշով սկսյա գարդերը՝ 900 հարգի, 78.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 217.300 ՀՀ դրամ: Թիվ 43 սկսյա ջարդոն՝ 7 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 96.900 ՀՀ դրամ: Թիվ 44 լոտ՝ սկսյա գարդեր՝ 22,8 գր. քաշով, որից 19,9 գր. քաշով սկսյա գարդը՝ 585 հարգի, 275.500 ՀՀ դրամ, 2,9 գր. քաշով սկսյա գարդը՝ 750 հարգի, 51.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 326.900 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 9,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 124.600 ՀՀ դրամ:

Թիվ 46 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 11,1 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 153.700 ՀՀ դրամ: Թիվ 47 լոտ՝ սկսյա գարդեր՝ 20 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 18 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 249.200 ՀՀ դրամ: Թիվ 48 լոտ՝ սկսյա գարդեր՝ 25,1 գր. ընդհանուր քաշով, որից 11,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 11,5 գր.) սկսյա գարդերը՝ 585 հարգի, 159.200 ՀՀ դրամ, 13,5 գր. քաշով սկսյա գարդերը՝ 500 հարգի, 157.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 316.700 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ սկսյա գարդեր՝ 12,7 ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,2 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 168.900 ՀՀ դրամ: Թիվ 50 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 24,3 ընդհանուր քաշով (զուտ քաշը 22 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 304.600 ՀՀ դրամ: Թիվ 51 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 4,5 ընդհանուր քաշով (զուտ քաշը 2,6 գր.), 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 30.300 ՀՀ դրամ: Թիվ 52 լոտ՝ սկսյա գարդեր՝ 16,9 գր. ընդհանուր քաշով, որից 12,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 11,7 գր.) սկսյա գարդերը՝ 585 հարգի, 162.000 ՀՀ

դրամ, 4,6 գր. քաշով սկսյա գարդերը՝ 500 հարգի, 53.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 215.700 ՀՀ դրամ: Թիվ 53 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 43,3 գր. ընդհանուր քաշով, որից 38,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 37,5 գր.) սկսյա ջարդոնը՝ 585 հարգի, 519.300 ՀՀ դրամ, 4,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4 գր.) սկսյա ջարդոնը՝ 500 հարգի, 46.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 566.000 ՀՀ դրամ:

Թիվ 54 լոտ՝ սկսյա գարդ՝ 22,9 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 317.100 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 4,2 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 58.100 ՀՀ դրամ: Թիվ 56 լոտ՝ սկսյա ջարդոն՝ 4,7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4,5 գր.), 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 52.500 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հարթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա:

ԿԵՂԾԻՔ

ԿԳՄՄՆ-Ն ՓՈՐՉՈՒՄ Է ԹԱՔՑՆԵԼ

Հայաստանի զեղարվեստի ոլորտի ակադեմիայի՝ դեռեւս 2022-ի դեկտեմբերի 16-ին սեղի ունեցած ռեկտի ընթացքում անվավեր են ճանաչվել: ArmLur.am-ն այս մասին տեղեկացավ Կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարությունից:

«Նիստում քննարկվել եւ անվավեր է ճանաչվել ՀՀ ԿՊՈՒ հոգաբարձուների խորհրդի՝ 2022թ. դեկտեմբերի 16-ին կայացած ռեկտորի ընտրությունը»,- ասված է նախարարության տարածած հաղորդագրության մեջ: Գեղարվեստի ակադեմիայում տեղի ունեցած անհասկանալի ընտրությունների մասին, ինչի ժամանակ ԿԳՄՄ փոխնախարար

Արայիկ Խզմայանի նախագահության (ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նախագահն է) օրենքի խախտմամբ ռեկտոր էր ընտրվել, առաջինը «Ժողովուրդ» օրաթերթն էր անազանազել գրելով, որ «ԿԳՄՄ փոխնախարարի հովանու ներքո Գեղարվեստի ակադեմիայում պաշտոնական կեղծիքով ընտրություն է եղել»:

Թեեւ նախարարությունն ու ակադեմիան այժմ փորձում են բուխում նախորդ տարի տեղի ունեցած հոգաբարձուների Նիստի ժամանակ տեղի ունեցած ընտրություններն անվավեր ճանաչելով թեման փակել ու առաջ անցնել, բայց փաստն այն է, որ, ըստ օրաթերթի հրապարակած տեղեկությունների, հոգաբարձուների խորհրդի բո-

լոր 16 անդամները կողմ էին քվեարկել նախկին ռեկտոր Արամ Իսաբեկյանի թեկնածությանը: Իսաբեկյանն անգամ առաջարկվել չէր կարող, քանի որ, օրենքի պահանջների համաձայն, գիտական աստիճան չունի:

Եվ եթե քաղաքական իշխանությունն ու լիազոր մարմինը՝ ԿԳՄՄ-ն, բավարարվելու են՝ հարցը զուտ միայն հոգավարձուների խորհրդի Նիստը չէր չափ համարելով ու պատասխանատու պաշտոնյաներին սուր հարցեր չուղեղով, ապա ջբացառենք, որ ԿԳՄՄ պաշտոնյաների հովանու ներքո առաջիկայում Նոր պաշտոնական կեղծիքներ կարող են տեղի ունենալ:

ՍԵՎԱԿ ՎԱՐՈՂՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԴՐՎԱԳ

ՑՈՒՑԱՆԻՒՄ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱԿԱՄԱՐՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լրասուն» մեդիա թանգարանի «Հակամարտության լրագրության դրվագներ» ցուցադրությանն այցելուները կարող են տեսնել լրասվականների, ամսական կարիքների աշխատանքներ, որոնք դաստիարակում են այն արհավիրքների մասին, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը 1988 թվականից ի վեր: Ցուցադրանքում տեղադրված հղեկրանների միջոցով էլ կարելի է գտնել արխիվային տեսանկյուններ, տպագրված մամուլի օրհանակներ, ռադիոհաղորդումներ, լրասվականներ ու հոդվածներ, վերլուծություններ, վավերագրական ֆիլմեր ու մուլտիմեդիա նախագծեր, որոնք են լրագրողների աչքերով անդրադառնում են Ղարաբաղյան հակամարտությանը:



Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ հունվարի 20-ին Հայաստանի նկարիչների միությունում: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ներկայացուցիչ, Media.am կայքի խմբագիր Գեղամ Վարդանյանի խոսքով՝ իրենց թիմն աշխատել է անկախության տարիներին հակամարտության թեմաներով նյութերը հավաքելու և լրագրողների աշխատանքները հանրությանը ներկայացնելու ուղղությամբ: «Դա թեմա է, որն ընդգրկում է, և հնարավոր չէ ամբողջ ինֆորմացիան հավաքել, ինչի համար տարիներ են անհրաժեշտ, ուստի ցուցադրել ենք դրվագներ: Պատերին փակցված լուսանկարները ցուցադրության փոքր մասն են», - նշեց նա և այցելուներին առաջարկեց մոտենալ հպելրաններին՝ վստահեցնելով, որ ծանոթանալով դրանց բովանդակությանը՝ նրանք դժվարությամբ կհեռանան ցուցադրահից: Վարդանյանն ընդգծեց՝ ցուցադրության շրջանակում պատրաստվում են հյուրընկալել դպրոցականների, ուսանողների, կազմակերպելու են հանդիպումներ լուսանկարիչների հետ: «Սա միայն ցուցադրություն չէ և կարող է մեդիայի, լրագրության, հակամարտությունների քննարկման վայր դառնալ», - նշեց Գեղամ Վարդանյանը: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն Նուրե Սարգսյանն էլ հավաստիացրեց, որ լրագրողների աշխատանքն օր ու ջրի պես կարևորվում է հատկապես ճգնաժամային իրավիճակներում, իսկ ցուցադրությունը մտադիր են ներկայացնել նաեւ մարզերում:

թյուն, մեր հայրենակիցների խնդիրները ներսից տեսնելու ծուլության կա: «Նոր եմ վերադարձել Ուկրաինայից: Հայաստանի աչքերով նայեցի այդ երկրին, և որովհետև բացահայտեցի այն և ռուս-ուկրաինական պատերազմը», - նշեց Մարտիրոսյանն ու հավելեց՝ լրագրողը հակամարտություն լուսաբանելիս չի կարող կողմ կամ դեմ չլինել, քանի որ հակամարտության ընթացքում հազարավոր մարդկանց արյուն է թափվում, միլիոնավորները տնանկ են դառնում: «Լրագրողը պետք է կողմ լինի, որ արդարությունը հաղթի», - եզրափակեց նա: Լուսանկարիչ Վահինակ Ղազարյանը ցուցադրությանը երեք լուսանկար է ներկայացրել, որոնցից մեկը՝ «Հանգստացող զինվոր»-ը, World Press Photo-ի «Իրադարձություն» անվանակարգում մրցանակ է արժանացել: 2016-ին նա լուսաբանել է ապրիլյան քառօրյա պատերազմը, 2020-ին՝ արցախյան 44-օրյա պատերազմը: «Իմ ներքին կանչով եմ մեկնել պատերազմ լուսաբանելու: Գնացել եմ անձնական տեխնիկայով ու մեքենայով: Ուզում էի անպայման լինել հակամարտության գոտում, լինել դիրքերում՝ որպես իրականությունը տեսնող ու պատմող եւ, եթե հնարավոր է, լուսանկարներով հարցեր բարձրացնել», - նշեց Ղազարյանը: Կարծում է՝ շատ կա-

րետոր պահեր է բաց թողել, քանի որ կան տեղեր, որտեղ հասնելու խոչընդոտներ կան, կան էթիկական խնդիրներ, պետական գաղտնիք համարվող տեղեկություններ, որոնք չի կարելի ներկայացնել: «Պետք են հատուկ հմտություններ, արհեստավարժություն կարելի է լուսաբանելու համար, քանի որ այն, ինչ լուսանկարում ես, պատմություն է դառնում», - ասաց լուսանկարիչը, որը նաեւ գոհված զինվորների, նրանց մայրերին նվիրված նախագծեր է իրականացրել: «Լրատուն» մեդիա թանգարանի նախագիծն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Այն հանրությանն է ներկայացնում լրագրողների աշխատանքը վերջին տասնամյակների նշանակալի իրադարձություններն ու երեւոյթներ լուսաբանելիս: «Հակամարտության լրագրության դրվագներ» ցուցադրությունը կյանքի է կոչում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը շվեյցարական HEKS/EPER և գերմանական Brot fuer die Welt բարեգործական հիմնադրամների աջակցությամբ իրականացվող «Հակամարտությունների լուսաբանում լրագրողների գիտելիքների և հմտությունների ամրապնդում» ծրագրի շրջանակում: Ցուցահանդեսը բաց կլինի մինչև հունվարի 29-ը:

ԼՈՒՐԵՐ

37 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի շրջանակում մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների համար 2023 թ. նախատեսում է ձեռք բերել 9 անուն 37 երաժշտական գործիք՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ, կլարնետ, ֆլեյտա, սաքսոֆոն, քսիլոֆոն, քանոն, թառ:

Ծրագիրն իրականացվում է գեղարվեստական կրթության համակարգի բնականոն գործունեության, արտադպրոցական կրթության և գեղագիտական դաստիարակության շարունակական զարգացման, օժտված և շնորհալի երեխաների բացահայտման ու նրանց մասնագիտական ունակությունների զարգացման նպատակով: Բազմաթիվ օժտված երեխաներ գեղարվեստական կրթության համակարգից դուրս են մնում գործիք չունենալու կամ ձեռք բերել չկարողանալու պատճառով: Այս ծրագիրը միտված է արտադպրոցական կրթության հասանելիության, մասշտաբային ապահովմանը և կարևոր նշանակություն ունի ոլորտի շահառուների սոցիալական բեռի թեթևացման հարցում:

Ընդհանուր առմամբ «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի շրջանակում տարբեր տարիներին ձեռք է բերվել 659 երաժշտական գործիք, որոնք տրամադրվել են երաժշտական և արվեստի դպրոցներին նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

Հունվարի 22-ը հայ մեծանուն կոմպոզիտոր և դաշնակահար, Խորհրդային Միության և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանի ծննդյան օրն է: Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի նախաձեռնությամբ մշակույթի ոլորտի մի շարք ներկայացուցիչներ ծաղիկներ են խոնարհել կոմպոզիտորի հուշարձանին:

Արարողությանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը, Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի տնօրեն Արտյոմ Նաղդյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանը, Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական թուղթի տնօրեն Արմեն Հարությունյանը և թուղթի երգչախումբը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսներ, Բաբաջանյանի արվեստի երկրպագուներ: Ի հիշատակ հայ քաջարի զինվորների՝ թուղթի երգչախումբը հանդես է եկել «Տղերքը, որոնք չկան» կատարմամբ:

ԴՐՎԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ԱՅՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

Վերակենդանացման բաժանմունքում գտնվող երկու վիրավոր զինծառայողների մոտ նկատվում է դրական դինամիկա. նրանց մոտ դեռ երկուսն էլ վիճակ է: Այս մասին ArmLur.am-ի հեռուցում հայցնեցին Այրվածքաբանության ազգային կենտրոնից:

Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N գործառնասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում:

Հրդեհի հետեւանքով գոհվել է 15, վիրավորում ստացել՝ 7 զինծառայող, նրանցից չորսը բուժօգնություն ստանալուց հետո դուրս են գրվել, 3-ը՝ տեղափոխվել Երեւան՝ Այրվածքաբանության ազգային կենտրոն: Նրանցից երկուսի վիճակը գնահատվում է ծանր:

Հրդեհի դեպքի առնչությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ ՔՕ 532-րդ հոդվածի 4-րդ մասով (զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզուգույթությամբ առաջացրել է երկու և ավելի անձի մահ):

ԼԻՂԱ ԵՂԻՎՋԱՐՅԱՆ

Հիշեցնենք՝ հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, հրդեհ է բռնկվել

● Հունվարի 25-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Շունն ու կատուն» մանկական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 15:00-ին:



Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ ալիմենտի բռնազանձման նույնատիպ դիմել դատարան, սակայն փաստաթղթերը չափ զույգ են ուզում. կա՞րողոք անվճար սարքերակ:

Թեմիկա Ղազարյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ.

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու եւ ալիմենտի բռնազանձման նպատակով դատարան դիմելու հարցում օգնություն հնարավոր է հայցել ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակում: Փաստաբանների պալատի համակարգում գործող հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերում միայն հետևյալ սոցիալական խմբերին՝

- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին,
2) 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամներին,
3) դատապարտյալներին,
4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին,
5) Հայրենական մեծ պատերազմի եւ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին,
6) գործազուրկներին,
7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին,
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,
9) փախստականներին,
10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին,
11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում (սույն կետի խմատով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաեւ, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն, չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց):

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Տարբեր փաստաբանական գրասենյակներ եւ փաստաբաններ մատուցում են փաստաբանական ծառայություններ, որոնց արժեքները տարբեր են: Կգտնվեն փաստաբաններ կամ փաստաբանական գրասենյակներ, որոնք կարող են ծառայություններ մատուցել համեմատաբար ավելի մատչելի գնով կամ դատական գործի ավարտին վճարման պայմանով: Փորձեք հարցում անել հնարավորինս շատ փաստաբանական գրասենյակների եւ փաստաբանների՝ ճշտելով դրանց ծառայությունների արժեքները, եւ դրանցից ընտրել ամենահարմար տարբերակը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Պարտեւ չփակելու հետեւնով կալանք են դրել միակ բնակարանի վրա եւ ցանկանում են աճուրդով վաճառել: Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել:

Ալիսա Ասրյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Նախեւառաջ պետք է արձանագրել, որ դեռեւս 01.03.2017թ.-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում պարտապանին պատկանող միակ բնակարանը, որի շուկայական արժեքը հավասար կամ ցածր է ընդհանուր 4,900,000 ՀՀ դրամից, համարվում է բռնազանձման ոչ ենթակա գույք, ուստի այն չի կարող իրացվել պարտապանի պարտավորությունների համար:

Բնակարանը համարվում է անձի միակ կացարանը, եթե անձի անունով այլ անշարժ գույք (բնակարան կամ բնակելի տուն) գրանցված չէ: Իսկ եթե միակ բնակարանի շուկայական արժեքը բարձր է վերոնշյալ գումարի չափից, ապա բնակարանի իրացումից հետո Ձեզ պետք է վերադարձվի միակ բնակարանի իրացման համար նախատեսված վերոնշյալ գումարը: Այս կանոնները չեն գործում այն դեպքերում, երբ՝

- բնակարանը գրավադրված է եւ հանդիսանում է գրավի առարկա,
• պարտքի գումարը հանդիսանում է ալիմենտային գումար կամ կյանքին կամ առողջությանը կամ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման գումար:

ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Սակայն հարկ է նշել, որ վերոգրյալ փոփոխությունը տարածվում է օրենքի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կատարողական վարույթների վրա: Այսինքն՝ մինչեւ 01.03.2017թ. հարուցված կատարողական վարույթներով պարտապանին պատկանող միակ բնակարանը համարվում է բռնազանձման ենթակա գույք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Արցախի կառավարության տեղեկագիրը ներկայացնում է շրջափակման 43-րդ օրվա վիճակագրությունը. 13 երեխա գտնվում է մանկական հիվանդանոցի Նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում: Արդեն 159 երեխա ծնվել է շրջափակման մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a dashed box for contact information: Բաժանորդագրության բլանկ, Անուն՝, Ազգանուն՝, Առաքման հասցե՝, Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝, Հեռ.՝ (060) 490049, 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 23.01.2023

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: